ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Որոշում

09/12/2003 թիվ 416

ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՉԱՓՈՐՈՇԻՉԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԵԹԱՏՎՅԱԼՆԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2003 թվականի հունվարի 17-ի «Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալների տարածման հատուկ ստանդարտին Հայաստանի Հանրապետության անդամագրման նախապատրաստական միջոցառումների մասին» թիվ 11-Ա որոշումը և Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրության վարչության պատվիրակության հետ 2003 թվականի սեպտեմբերի 18-25-ը Երևանում իրականացված աշխատանքները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է.

1. Հավանություն տալ Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ չափորոշիչին» Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակներում ներկայացված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մեթատվյալներին՝

1.1. ««Տվյալների տարածման հատուկ չափորոշիչի» մեթատվյալներ՝ Կենտրոնական բանկի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշներ» և «Կենտրոնական բանկի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշների ամփոփ մեթոդաբանությունը «Տվյալների տարածման հատուկ չափորոշիչի» համար»՝ համաձայն հավելված 1-ի,

1.2. ««Տվյալների տարածման հատուկ չափորոշիչի» մեթատվյալներ՝ բանկային համակարգի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշներ» և «Բանկային համակարգի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշների ամփոփ մեթոդաբանությունը «Տվյալների տարածման հատուկ չափորոշիչի» համար»՝ համաձայն հավելված 2-ի,

1.3. ««Տվյալների տարածման հատուկ չափորոշիչի» մեթատվյալներ՝ տոկոսադրույքներ» և «Տոկոսադրույքների ամփոփ մեթոդաբանությունը «Տվյալների տարածման հատուկ չափորոշիչի» համար»՝ համաձայն հավելված 3-ի,

1.4. ««Տվյալների տարածման հատուկ չափորոշիչի» մեթատվյալներ՝ միջազգային պահուստներ և արտարժութային իրացվելիություն» և «Միջազգային պահուստների ամփոփ մեթոդաբանությունը «Տվյալների տարածման հատուկ չափորոշիչի» համար»՝ համաձայն հավելված 4-ի,

1.5. ««Տվյալների տարածման հատուկ չափորոշիչի մեթատվյալներ՝ փոխարժեք» և «Փոխարժեքի ամփոփ մեթոդաբանությունը «Տվյալների տարածման հատուկ չափորոշիչի» համար»՝ համաձայն հավելված 5-ի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վիճակագրության վարչությանը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ չափորոշիչին» Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակներում սահմանված պարբերականությամբ և ժամկետայնությամբ ապահովել համապատասխան տվյալների հրապարակումը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ **Տ. Սարգսյան**

2003 թ. դեկտեմբերի 17
Երևան